

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2015 թ. օգոստի 28-ին կայացած թիվ 2 նիստի

Օրակարգում՝

- Մրցույթ
- Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 33 անդամներից նիստին ներկա էին 27-ը:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան Է.Ս. Գևորգյանի հաղորդումը՝ կենդանաբանության ամբիոնում 1.0 դրույքաչափով ամբիոնի դոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին (1տեղ):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ֆ.Դ. Դանիելյանը: Նա ներկայացրեց տեղեկություններ ընտրվող թեկնածուի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Գրանցել կ.գ.թ. Աշոտ Վարդգեսի Ասլանյանի փակ (գաղտնի) քվեարկության ցուցակում՝ կենդանաբանության ամբիոնում դոցենտի պաշտոնում ընտրվելու համար:
2. ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ նախագահ՝ պրոֆ. Պ.Հ. Վարդևանյան, անդամներ՝ դոցենտներ Հ.Հ. Սեմերջյան, Ա.Ֆ. Կարապետյան:

ԼՍԵՑԻՆ՝ Հաշվիչ հանձնաժողովի նախագահ պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

- ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները՝ խորհրդի 33 անդամներից քվեարկությանը մասնակցել են 27 հոգի, որոնցից Աշոտ Վարդգեսի Ասլանյանին կողմ քվեարկել են 25-ը, դեմ՝ 1, անվավեր՝ 1:
2. Աշոտ Վարդգեսի Ասլանյանին համարել ընտրված կենդանաբանության ամբիոնում դոցենտի պաշտոնում:

- Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ, դոցենտ Հ.Հ. Սեմերջյանի զեկուցումը ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման աշխատանքները գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.

Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ

Ա.Ֆ.Կարապետյան